

ԲԵՆԵՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՎԱՐԴԱՆ

(15-ԲԴ ԴԱՐ)

Վաստակաւոր զրիչ Արիստակէս Սերաստացու 1408 թուին, Աւագ Վանքում, ընդօրինակած «Մանրութունք» ձեռագրի էջերի գեղեցկութիւնը կազմում են մանրանկարները, որոնց հմուտ վրձինով նկարազարդել է 15-րդ դարի հայ նկարչական մշակոյթի լուսադոյն դէմքերից Վարդան մանրանկարիչը, որի մասին, սակայն, հայ մամուլում մինչև օրս էլ որևէ տեղեկութիւն լոյս չի տեսել, որով յայտնի չէ, թէ նա իր կրթութիւնը ժամանակի ո՞ր վանքի դպրոցումն է ստացել և ո՞ր վարպետ նկարչի մօտ մշակել է իր արուեստը: Պարզ է միայն այն, որ նա պատանեկան հասակից փայլել է իր նկարչական ձիրքով և հանդիսացել իր ժամանակի մշակութային պայծառ դէմքերից մէկը, իսկ ձեռագրերի յիշատակարանի տուեալների համաձայն նա ապրել և ստեղծագործել է Վլխաւորապէս 15-րդ դարի առաջին կիսում, Դարանաղեաց գաւառի «հռչակաւոր» և իր համալսարանով յայտնի Աւագ Վանքում, ուր վրձինել է ձեռագիր «Մանրութունք», ինչպէս այդ վկայում է յիշատակարանի հետեւեալ սեղմ տողը. «... նայ և զծաղկողս զՎարդանս յիշեա՛»:

Նա իր ամբողջ էութեամբ նուիրուել է հայ մշակոյթին և իր մանրանկարչական գործունէութեամբ նպաստել է 15-րդ դարի հայ նոր սերնդի և ժողովրդի գեղարուեստական ճաշակի զարդացմանը:

Ուշադրաւ է և այն, որ նա իր ինքնատիպ ոճով և իւրայատուկ արուեստով իր դարաշրջանում յայտնի է դարձել որպէս գոյնների ու արուեստի հմուտ նկարիչ և ժողովրդից ու արուեստագէտներից սիրուել է ու յարգուել:

Նրա մանրանկարչական մշակոյթը հիմնականում ընթացել է զարդանկարչութեան գեղարուեստական ոճաւորման և դիմանկարչութեան ուղղութեամբ:

Նրա վրձինած զարդանկարներն ու խորանները, իրենց ոճային պատկերաւորու-

թեամբ և վառ երանգաւորումներով գրաւիչ են: Այդ մանրանկարները վկայում են, որ նկարիչը լաւ է ուսումնասիրել հին նկարչական արուեստի նրբութիւններն ու բանաստեղծական գեղեցկութիւնները. նկարներ՝ որոնք լեզու են առնում և պատմում Աւագ Վանքի նկարչական դպրոցի և ծաղկող Վարդանի մանրանկարչական արուեստի էութեան, ձեւակերպումների ու նուաճումների մասին:

Թէ ո՞ր ձեռագիր մատենաներում և թանգարաններում գտնուում են արուեստագէտ Վարդանի մանրանկարչական միւս գործերը, մեզ յայտնի չէ: Ո՛վ գիտէ, թերեւ, դրանք մոնղոլ և թուրք աւերիչ արշաւանքների ժամանակ հարստահարիչների կողոպուտներին գտն են գնացել: Այդ տեսակէտից էլ մանրանկարիչ Վարդանից մեզ աւանդ մնացած «Մանրութունք»-ի մանրանկարները միջնադարեան հայ նկարչութեան պատմութեան համար թանկագին աւանդ են և ընդգծում են, որ արուեստագէտ Վարդանը միջնադարի հայ վարպետ մանրանկարիչների շարքում կարող է իր ուրոյն տեղը զբաւել:

Արձանագրերնք և այն, որ ձեռագիր «Մանրութունք»-ի զրչական և մանրանկարչական արուեստները վկայում են, որ Դարանաղեաց գաւառի Աւագ Վանքը մի ժամանակ եղել է հայ մշակոյթի մի նշանաւոր կենտրոն, ուր փայլել են տաղանդաւոր մանրանկարիչներ, գեղագիրներ, ոսկողներ, զարդանկարիչներ և վարպետ զրիչներ:

15-րդ դարի այս արժէքաւոր ձեռագրի լուսադոյն մանրանկարները, անկասկած, մտնելու են հայ բաղձագարեան նկարչական մշակոյթի գանձարանը, միաժամանակ ծաղկող Վարդանի պայծառ անունն ու յիշատակը գեղարուեստասէր սերունդների սրտերում անմոռաց են պահելու:

Նշենք և այն, որ նկարագարը «Մանրութունք»-ը միջնադարի հայ երաժշտական արուեստի պատմութեան համար նոյնպէս մի թանկագին աւանդ է: Այնտեղ յիշատակուում է «բարձերախտ, պատուելի և հեղահոգի» Տէր Սահակ երաժշտապետի անունը, որ 15-րդ դարի հայ երաժշտական արուեստի զարդացման խնդրում մեծ ծառայութիւն է մատուցել:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Փեհիլիսի